ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՊԱՐԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ բառարանագիր, հայագետ, թարգմանիչ Գևորգ Պարիս Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Զաքյան փողոցի հ.8 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԵՎՈՐԳ ՊԱՐԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գևորգ Պարիս Գևորգյանը ծնվել է 1901թ. Վանի վիլայեթ, Օսմանյան կայսրությունում:

1926թ. ավարտել է ԵՊՀ-ի հասարակական գիտությունների ֆակուլտետը՝ տնտեսագետի մասնագիտությամբ: Կազմել է բառարաններ («Պոլիգրաֆիական և հրատարակչական տերմինների ռուս-հայերեն համառոտ բացատրական բառարան», (1953), «Գրականագիտական տերմինների համառոտ բառարան», (1967, համահեղինակ), «Դպրոցական ուղղագրական բառարան» (1956, 2-րդ վերամշակված հրատ.՝ 1959, համահեղինակ), «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց» (1957), դպրոցական դասագրքեր:

Ենթադրվում է, որ Պարիս գրական կեղծանունն ընդունել է դեռևս դպրոցական տարիներին, երբ խմբագրում էր «Արծիվ Վասպուրականի» աշակերտական խմորատիպ թերթը: Սակայն առավել հայտնի է դարձել այդ կեղծանվամբ համալսարանի առաջին կուրսում, երբ սերտորեն շփվում էր գրական շրջանակների հետ, մասնակցում պրոլետգրողների ասոցիացիայի հիմնադրմանը: 1922թ. դեկտեմբերի 24-ին Գևորգ Գևորգյանն (դեռևս առաջին կուրսում) ընտրվել է նոր հիմնադրված Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի, ընդամենը երեք հոգուց (Ա. Վշտունի, Գ. Պարիս, Ե. Դանչո) բաղկացած, գործադիր մարմնի կազմում:

Գևորգ Գևորգյանը տիրապետել է հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն, քրդերեն լեզուներին: Կարող էր կարդալ և բացատրվել ֆրանսերենով ու գերմաներենով: Լեզուների իմացությունն էլ հենց հիմք է հանդիսացել նրա թարգմանչական և գիտահետազոտական ու խմբագրական աշխատանքների համար:

Գևորգ Գևորգյանը մահացել է 1958թ. հոկտեմբերի 17-ին, Երևանում:

Գևորգ Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Զաքյան փողոցի հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է քաղաքացի Նարինե Մուրադյանի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ